

ԹԱՆԳԻՆ

Եթե գյուղում ծաղիկ չլիներ, նա մանուկ ժամանակ չէր հիվանդանա, վերքերը չէր փոքի և չէչոտ էլ չէր լինի: Մայրն ուրիշ հոգս շատ ուներ՝ օրորոցում պարուրի մեջ Թանգուն կապելուց հետո ներս ու դուրս էր անում և չէր նկատում, թե ինչպես երեխան ուժ էր տալիս, թաթերը հանում և քորում, վերքերն արնոտում:

Թանգու առաջին սերը պատից կախ արած նախշով խալին էր: Ամռան շոգին ճանճերը լիզում էին երեխայի քթածակերն ու աչքի ակները, իսկ փոքրիկ Թանգին մատը բերանում, ծլուր կախ, ժամերով աչքը չէր հեռացնում խալու նախշերից:

Առաջին չորեքթաթ արշավը դարձյալ դեպի խաչին էր:

Տանը երեխա շատ կար, հոգսը շատ էր, վար ու ցանքսը միջոց չէին տալիս Թանգու հորը նկատելու ժառանգի առաջին սերը: Եվ պատահամա՞ր էր, որ նրա աչքին ընկավ որդու ծակոտկեն երեսը՝ չեչաքար:

Հայրը նայեց, ուզեց մի բան ասի, բայց բերանում հացի պատառը շաղախվեց թքի մեջ, կոկորդը սեղմեց, և մինչև կուլ կտար, միտքն էլ թռավ, անհետացավ:

Թանգին մեծացավ: Հոր տնկած ծառերը դեռ բար չէին տվել, երբ Թանգին մագլցում էր ծառն ի վեր, տավարը ջուրը տանում, օրը տասն անգամ աղբյուրը վազում սատը ջուր բերելու:

Երբ գանգի խոռոչում նրա ուղեղը խմորի գնդի չափ դառավ, Թանգին արդեն գիտեր, որ ամենից թանկը աշխարհի երեսին պարարտ սևահողն է, աղբած բոստանը, գոմը ապրանքով լի և նոր տնկած ծառերը, որոնց վրա մագլցում էր նա այն ժամանակ, երբ ետնն ու առաջը բաց էր:

Մեռնելիս հայրը Թանգուն փալասի մեջ փաթաթած ոսկիներ հանձնեց և աչքերը փակելուց առաջ մի անգամ էլ որդուն պատվիրեց ապրանքին լավ խնամել, տան կողքին մի ուրիշ ամարաթ շինել և ընդարձակել այգին:

— Աչքդ բաղին պահիր, — ասաց և աչքերը փակեց:

Ազգ ու բարեկամ լաց եղան, իսկ Թանգին գնաց գոմը նախ հոր թողած ոսկիները հաշվելու և ապա մի լղար եզ ջոկելու մեռելահացի համար:

Գերեզմանատան ճանապարհը բաղի մոտով էր անցնում: Վերադարձին Թանգին բաղի դռնակը բաց արեց, ներս մտավ, նայեց ծառերին, և շատ փոքր թվաց նրան հայրական այգին: Գրպանում գրնգում էր ոսկին, և գրպանի ոսկուց ցուլք էր ելնում, Թանգու աչքերը շլացնում:

Կանգնեց այգում, որպես հաստարմատ ծառ, նայեց պատերից դեն ձգվող պարարտ հողերին, մտքում գծեց մի սահման և այդ սահմանը դրեց իր կյանքի կետ նպատակ:

* * *

Տարիները _____ գլորվում էին որպես անիվներ անտես:

Տարիները արծաթ փոշի էին շաղ տալիս Թանգու մազերի վրա, մի աներևույթ ձեռք նրա դեմքին ակոսներ էր ծրում:

Ասես վերջ չալիտի ունենար ժամանակը Թանգու համար: Ամեն տարի բերում էր մի քիչ հող, երկու մուրհակ, տոկոսով դիզած արծաթ և սև հողեր պարարտ՝ հասած խմորի պես:

Գյուղում Թանգին հզոր էր, բազուկն ուժեղ, ասածն օրենք: Խուլ բողոք կար և տրտունջ, թե Թանգին աղքատի պատառն է կուլ տալիս, պայմանագիր է կեղծում, կաշառում օրենքին և զավթում, թաթը դնում մտտ հողերի վրա, դառնում խան ու սարդար: Քմծիծաղ էր տալիս Թանգին, երբ ականջին էր հասնում գյուղի խոսքը, ոլորում էր բեղը և ինքնագոհ հայրական այգու ճանապարհը բռնում, դռնակը բաց անում: Տարիները գլորվում էին, ծառը պտուղ էր տալիս, արտը՝ ոսկեհատ ցորեն, արևը ծագում էր, խանձում ցերեկին, մայրամուտին հանգչում: Թանգին պինդ էր կոխում սեփական հողը, մտքում դրած սահմանին ձգտում անխռով, ինչպես ծագում է արևը, խանձում ու հանգչում մայրամուտին:

* * *

Մի գարուն էլ, երբ օրերը երկարացան, հողը տաքացավ, և գոլորշի բարձրացավ հանգստացած հողից, մի գարուն էլ Թանգու համար ուրախ լուրեր չեկան քաղաքից: Արևն էլի առաջվա տեղիցն էր ծագում, բայց Թանգուն թվում էր, թե ծովել է աշխարհի առանցքը, վազքն ընդհատ է, շնչակտուր:

Թխպեց Թանգին: Այգում սեփական հողը պինդ չէր կոխում, դողում էին կոր ծնկները: Կանգնում էր ծառի մոտ, տեսնում, թե ինչպես լցվում են բողբոջները, սևին է տալիս խնձորենու մաշկը, զգում էր, որ զարթնում են արմատները, շարժվում են հողի մեջ կենարար հյուրերը, և մտածում, որ գարունն ուրախ լուրեր չի բերել: Գունատվում էր մերթ, զայրանում, և զայրույթից չեչաքար երեսը կարմրին էր տալիս:

Օգոստոսին կարմրեց խնձորը, հասավ: Գիշերով թռան պարսպի վրայով, ծառերը պլոկեցին, ճղակտոր արին: Եվ երբ լուսաբացին Թանգին այգու դռնակով ներս մտավ, տեսավ խնձորները թափված, բոստանը ոտնակոխ, ճղները՝ կտրած կռներ, տեսավ և գիշերվա հետքերը, տերևներ ցողոտ այստեղ-այնտեղ, հասկացավ, որ գարունը տեղահան է արել պարիսպները, ուրիշ բերաններ կան գյուղում՝ խնձորի, փափուկ լավաշի կարոտ:

Տարիներն էլ անիվներ չէին անտես, այլ ծանր ջաղացքար, որոնք գլորվում էին թափով և տրորում պարիսպները, հիմնահատակ անում զավթած հողերի սահմանները, հարթում հավասար:

Մուրհակները խոնավացան, բորբոսնեցին երկաթե սնդուկում, ուժը հազիվ էր հերիքում պահելու եղածը, հեռվում մթնեց սահմանը, որ գծել էր նա գերեզմանատնից գալիս:

Խեղճացավ Թանգին:

* * *

Ուրիշ օրեր եկան, արև օրեր:

Կռունկները եկան, սևահողը տաքացավ, սևահողում արևի տակ ծլեց ոսկե հատիկը:

Թանգին գոհ կլիներ, եթե միայն կռունկները գային, և արևի տակ հատիկը ծլեր:

Գարունքին եկան հողերը չափելու, հավասարելու: Գյուղը մրջնոցի պես էր,

գարունքին զարթնած մրջնոց:

Ժողով կար, աղմուկ, աղաղակ:

— Վեր թափեք Թանգու հողերը, հավասար բաժին անենք, — կանչում էին ժողովում, Թանգու երեսին շարտում՝ «քյասիբ ուտող»:

Եվ բարակ շղթաներով չափեցին հողերը, ապառաժն ու այգին, ջրովին ու դեմին:

Չափեցին, նկարեցին, բաժին արին:

Թանգու հողերը սելավի բերանն ընկան, պարարտ հողերը թռան ձեռքից, հեռացող կռունկի պես, և մնաց այգու կեսը, մի օրավար ջրովի, երկու կտոր վարելահող: Շունչը քիչ էր, այդքան էր հասնում:

Երբ շղթաները գնգալով կտոր-կտոր արին Թանգու հողերը, նրան այնպես թվաց, թե սիրտն են կտրատում: Բողոքեց, սպառնաց, գանգատվեց, հռհռացին, ծաղրեցին:

Թանգին հենվեց այգու քարապատին, նայեց չափարարների հեռացող խմբին:

Մայրամուտ էր, իրիկնամուտ էր արդեն:

* * *

Հենց նույն գիշերը Թանգու տանը մի քանի հոգի՝ ազգ ու բարեկամ ժողովի նստեցին: Թանգին էր կանչել իր ճանաչ մարդկանց՝ մի հնար գտնելու, հողերի բաժանումը խանգարելու, մինչև՝

— Մեզ համար մի լույս ծագի, — ինչպես ասում էր Թանգին:

— Թողնեն իմ ձեռքով հողերս բաժանեն: Մեկը քեզ տամ. ազգ ես ինձ, ինչո՞ւ խալխը ուտի, ես դատեմ...

Մինչև կես գիշեր հնար էին փնտրում, խափանման միջոց:

— Թանգի ամի, մենք որ բողոք տանք, չեն ընդունի., Վերջը լավ չի լինի, — ասաց մեկը:

— Եկ կանանց կազմակերպենք, թող նրանք անեն:

Հենց այդ գիշեր էլ կանչեցին մեկին, որին Թանգին խոստացավ չորս փութ ցորեն, և դիմումը գրվեց նախ միայն «կանանց միության» կողմից, բայց վերջում անհրաժեշտ համարվեց, որ տղամարդիկ էլ ստորագրեն:

Եվ գրագիրը թղթի վրա շատ պարզ դրեց նախ «ՀՄԽՀ», ապա ներքևը՝ «Մրվան գյուղի կանանց և տղամարդկանց միություն»:

Աքլորականչին ժողովը ցրվեց: Թանգին ճրագի տակ նայում էր գրած թղթին, որի վրա ներկա եղողներից մի քանիսը բույթ մատով կնքել էին «վասն անգրագիտության»:

Մյուս օրը Թանգին գյուղում մարդու էր ման գալիս, կողմնակից ճարում, համոզում, որ թղթին ձեռք քաշեն: «Մրվան գյուղի կանանց և տղամարդկանց միության» դիմումը Թանգին հատուկ մարդով քաղաք ուղարկեց:

* * *

Երկար ժամանակ չանցավ:

Մի իրիկուն, երբ Թանգին տնքալով շորերն էր հանում քնելու, զգիրը կտուրից ձեն տվեց նրան, թե շտապ գործով կանչում են գյուղխորհրդից: Թանգին գնաց՝

ճանապարհին հազար միտք անելով, հազար կասկած: Դիմումը մերժել էին,

հողաբաժանումը հաստատել:

— Թանգի ապեր, գործդ հիմա էլ կանանց հետ է, միանում ես նրանց հետ, —

ծիծաղելով ասաց նախագահը, — գնա, տեղդ հանգիստ նստիր, Թանգի ապեր, էն վաղ էր, որ...

Թանգին փոշման տուն վերադարձավ:

Պատկեց, քունը չտարավ: Միտք էր անում, միտն էր բերում պարարտ հողերը, հոր պատվիրանը՝

— Աչքդ բաղին պահիր, — ոսկիները, որ տվեց հայրը մեռնելուց առաջ, բորբոսնած մուրհակները և երկաթե օղերով պսպղուն շղթան, որ բաժանեց սևահողը, այգին:

Թանգու աչքերն ընկան պատից կախած խաղուն, որ տարիների ընթացքում խունացել էր արդեն, հնացել:—